



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերձագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

82

[REDACTED]

Մ Ա Ր Տ Ի Կ Ի

Հ Ր Ի Ն Ա Տ Ե Տ Ր

Զ Ր Ա Յ Ո Ւ Ժ Ե Ր Ի Մ Ա Ս Ի Ն

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

[REDACTED]
[REDACTED]

1 9 3 1

358.119


23 SEP 2017

Պրոֆեսորներ բոլոր յերկրների միացեալ

ԿԱՐՍԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆԻ
- ՇՈՒՇԱՏԵՏՐ

ԶՐԱՀՈՒԺԵՐԻ ՄԱՍԻՆ

ԿԱԶՄԵՑ Մ. ԴԵՐԵՎՅՈՎ.



Համալսարանի Գրադարանի ԲԳԿԲ մեքենայում
մատուցվող ծառայության կողմից

ԱՐԽՎ

ԳՐԱԳԱՆՔ

Կ. Ա. ԳԻՒՂՅԱՆԻ ԿՐԹԱՍԱՐԱԿ.

Յերևան, 1981

ПОМЯТКА
 КРАСНОАРМЕЙЦУ
 О БРОНЕСИЛАХ
 СОСТ. С. ДЕРЕВЦОВ

ՄԵՏՆԻՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ
 ՀՐԱՏ. 1517
 ԳՐԱՌԵՊՎԱՐ 6188 (Բ)
 ՏԻՐԱԺ 6500 ՊԱՏՎԵՐ 757



1-29559

Զ Ր Ա Հ Ո Ւ Ժ Ե Ր

Հակառակորդի զրահուժերի դեմ
 խեղացիորեն կռիվելու համար, կար-
 միք բնական յուրաքանչյուր մարտիկ
 սեռը և լավ իմանա զրահավոր գորա-
 մասերի կառուցվածքը, մարտական
 հասկումները և գործողություն-
 ների ձևերը:


Զրահավոր մասերը իրենց շարժ-
 ման ձևով բաժանվում են՝ տանկա-
 վին, ախտամորթիային մասերի և զրա-
 հապնացքի:

Տ Ա Ն Կ Ե Ր

Տանկերը, նախած իրենց ազատա-
 դիման ձևովանը և հզորությանը,
 բաժանվում են՝ մեծ, միջին, փոքր
 տանկերի և տանկետեղաների:

Մեծ տանկը (ծանր) մինչև 30 տոնն
 ծանրություն ունի և 4-ից մինչև 8
 կիլոմետրի արագություն մի ժամում:
 Կա զինված և մեկ 57 միլիմետրանոց

Թնդանոթով և հինգ Իռչկիսի գնդա-
 ցրերով: Տանկի զրահը չի կարելի ծա-
 կել վոչ հրացանա – գնդացրային զրն-
 դակով և վոչ ել հրետանական արկի
 բեկորներով: (Տես նկար 1):



Նկ. 1. Ծանր տանկ.

Տանկը կարող է անցնել մինչեւ 3 և
 կես մետր բախուժյունն ունեցող փո-
 սեր և խրամատներ, անցնել մինչեւ
 1 և կես մետր բարձրութեան արգելք-
 ների վրայով, հաղթահարել մինչեւ
 45 աստիճան դիքություն, ջարդուկը-
 շուր անել ծառներ մինչեւ 60 սանտի-
 մետր տրամագծով:

Այս տանկերն ունեն մեծ ծանրու-
 թյուն և նշանակալից օպտաագինում,
 դործադրվում են առավելապես հակա-
 ուսկորդի ուժեղ ամրացրած դիրքերի
 դեմ, վորպես ձեռքերու հզոր միջոց:

Միջին տանկը քաշում է մինչեւ 16
 տոնն: Եարժվում է մոտ 20 կիլոմետր
 արագութեամբ մի ժամում: Զինված
 է թնդանոթով և գնդացրերով: Մա-
 նույնպես պաշտպանված է զրահով,
 այդ զրահը չի կարելի ծակել վոչ հր-
 րացանի ու գնդացրի գնդակով և վոչ
 ել արկի բեկորներով (կտորներով):
 Միջին տանկը կարող է անցնել մինչև
 2 ու կես մետր լայնութեան փոսեր ու
 խրամատներ, հաղթահարում է մինչև
 40 աստիճան դիքություն և կտրտում
 է առանձին ծառեր մինչեւ 45 սանտի-
 մետր տրամագծով:

Փոքր տանկը քաշում է մինչեւ 7
 տոնն և շարժվում է մոտ 25 կիլոմետր
 արագութեամբ մի ժամում: Զինված է
 37 միլիմետրանոց թնդանոթով և մեկ
 գնդացրով: Կարող է անցնել մինչև


2 մեար լախուժյան փսեք ու խրամատներ, հալթահարում և մինչեւ 70 սանտիմետր բարձրութեան արդելքներ, կարող և բարձրանալ մինչեւ 45 սանտիմետր բարձրութեան և կոտրում և առանձին ծառեր մինչեւ 25 սանտիմետր արամազծով:

Միջին և փոքր տանկերը, շնորհիվ մեծ շարժումակույժյանն ու բավականաչափ ուժեղ սարսաղինման, գործարկում են առաջելապես մանյովրացին դասակարգում և կանգ առած հսկառակորդի դեմ:

Տանկը մի հզոր միջոց և հսկառակորդին ուժգին և կործանելի հարվածներ հասցնելու համար: Նա իր թևառնոթների և դնդաղների կրակով քարուքանդ և անում, ասեղում և իր ճանապարհին ընկած լարատիակոցները, դնդաղացիքները, և հսկառակորդի այլ տեսակի արդելքները. այդպիսով նա նախապահ և բաց անում իր յետևից յեկազ հետեվակի համար:

Տանկերը գործում են հետեվակի

հետ միասին: Տանկերի մի դասակարգ կցվում է մի հետեվակի դուռարտակի: Տանկային դասակարգ բաղկացած է յերեք տանկից և հանդիսանում է ամենափոքր մարտական միավորը, վոր յերեք բաժան - բաժան անեղ չի կարելի:




Նկար 2. Տանկետիկան թրքուրանի ընթացքով

Միջին ու փոքր տանկերը նույնպես կարող են գործել հեծելազորի հետ միասեղ, մանափունդ հետախու-

գության ժամանակ և հակառակորդի
 թեւերի ու թիկունքի վրա հարձակ-
 ման ժամանակ:

Ստովոդ աշտարակ գնդացրով



Նկար 3. Տանկետկան անվա - քրքու-
 րան ընթացքով:

Տանկետկաները — փոքր տանկերը
 ապաստարկվում են մեկ կամ յերկու
 մարդով: Տանկետկայի քաշն է 1-ից
 մինչեւ 3 տոնն: Տանկետկան գրահա-
 պատված է և աղ զրահը չի կարելի
 ծակել հրացանա - ղնդադրային գնդա-
 կով: Չինված է մեկ կամ յերկու զըն-
 դացրով: Շարժվում է թե ճանապար-

հով և թե առանց ճանապարհի տե-
 դանքով իր թրթուրածն ընթացքով
 (նկար 2):

Կան նույնպես անվա - թրթուրածն
 տանկետկաներ (նկար 3):

Այդպիսի տանկետկաները շարժվում
 են անիվների ճանապարհով մի ժա-
 մում 35 — 40 կիլոմետր արագու-
 թյամբ. մարդադետների վրայով կամ
 վարեբահողով շարժվում են թրթուր-
 ներով մի ժամում 20 — 25 կիլոմետր
 արագությամբ:


Տանկետկաները շարժվի իրենց մեծ
 շարժունակությամբ ու դիտելու լավ
 պայմաններին (վերելի կողմը կարելի
 թե բաղ անել), կարելի թե ոգտագոր-
 ծել հետախուզության և պահպանու-
 թյան համար, այլ և հետեւակի ու հե-
 ծեղադրի հետ միատեղ դործողության
 համար դեռևս չամրացած հակառա-
 կորդի դեմ:

ԶՐԱՎՈՐ ՍՎՏՈՒՐԻ ՆԵՐ (Զրահավտմորիկներ)

Ինչպես տանկերը, զրահավոր ավ-

ամօքիչները նույնպես դաշտայն-
ված են դրանով, փոքր չի կարելի ծա-
կել հրացանա - գնդացրային գնդակ-
ներով և սրկերի թեկոսներով (կտոր-
ներով) : Նրանք գինված են 37 միլի-
մետրանոց լինդանոթներով և գնդա-
զան.

Պնդացիք աշտարակներ Պնդացի



Սկար 4. Զրահապատ

յրերով : Յուրաքանչյուր դրահավոր
մեքենայի քաշն է մոտ 5 տոնն : Զրահ-
ավոր ամօքիչները շարժվում են
լավ ճանապարհով մի ժամում 40—50
կիլոմետր արագությամբ : Զրահավ-

ամօքիչները շարժվում են խնուղի-
ով և լավ գետնուղիներով : Բացառիկ
դեպքերում, յեղբ գետիներ պինդ է և
տեղը հարթ, նրանք կարող են շարժը-
վել և առանց ճանապարհների (նկար
4) :

Զրահավոր ամօքիչները գոր-
ծադրվում են հետեմպակի և հեմելագո-
րի հետ, նրանց ուղնելու համար մար-
տի բոլոր պայմաններում : Առանձնա-
պես նրանք մեծ ոգուտ են տալիս այն
ժամանակ, յեղբ գործում են հեմելա-
գորի հետ հակառակորդի թեկերում և
թիկունքում, նույնպես և մեծ ոգուտ
են տալիս հետախուզության ու հա-
կառակորդի վրա հարձակման և թնա-
կավայրերում գործողությունների
ժամանակ :

ԶՐԱՀԱԳՆԱՍՏԲ

Կան դաշտային ծանր և դաշտային
թեթևի գրահաղնացիներ : Յուրա-
քանչյուր դրահաղնացի կազմված է
մարտական մասից և բաղայից : Մար-
տական մասը մարտի համար է և

կազմված է գրահավոր շոգեկառքից և
յերկու գրահավոր հարթակից (պլոչ-
չաղկա), վորոնք բոլորովին պաշտ-
պանված են գրահավ, վոր չի կարելի
ծակել հրացանա - զնդացրային
զնդակներով և արկերի կտորներով:
Զրահապնացքները զինված են մի քա-
նի դաշտային թեղանոթներով և
հաստոցավոր զնդացրերով, վորոնք
զբված են հաստուկ կառուցված գրա-
հավոր աշտարակների մեջ: Մարտա-
կարգում գրահաշոգեկառքը կանգնեց-
վում է յերկու գրահավոր հարթակնե-
րի միջև, տենդերը (պահեստ-վա-
րոնք) դեպի հակառակորդի կողմն
ուղղված:

Զրահապնացքի բազան կազմված է
ուղեվորների և սպարանքային վազոն-
ներից, վորոնք սարքավորված են զը-
րահապնացքն սպասարկող խմբի և
տնտեսամասի համար: Զրահապնացքի
յերկու կողմից, սովորաբար, կպցը-
նում են յերկաթուղային տամալներ
(պլատֆորմա), բարձած ուսերով,

չպաներով և գործիքներով ճանա-
պարհը նորոգելու համար, յեթե փչա-
ցած է: Զրահապնացքները նշանակ-
վում են գործերին ուղևելու համար,
վորոնք գործում են յերկաթուղագծե-
րի ռայոնում: Յերբեմն նրանց տըր-
վում են դեսանտային ջոկատներ, ու-
վորաբար, մի հետևյալ գումարտա-
կից վոչ ավելի, գրահապնացքի զբու-
ված տեղանքն ամրացնելու, իր ձեռ-
քում պահելու համար: Հետախուզու-
թյան և պահսպանության համար զրա-
հապնացքներն ունեն գրահադրեզինա-
ներ:

ԶՐԱՀՈՒԺԵՐԻ ՈՒԺԵՆ ՅԵՎ

ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Հակառակորդի զրահուժերի դեմ
հաջողությամբ կռվելու համար պետք
է իմանալ տանկերի, գրահամեքենա-
ների և գրահապնացքների ուժեղ և
թույլ կողմերը:

ՈՒԺԵՆ ԿՈՂՄԵՐԸ

ա) Մտնելված են հաստ գրահով, և
պաշտպանված, վոր պահպանում է

խմբին (սպասարհոններին) հրացանա-
գնդացրային գնդակներին հարվածից և
ձեռքի նոճակների պայթյուններից (մի
նոճակի պայթյունը գրահուժերին վոչ
մի մնաս չի հասցնում) :

բ) Ունեն մեծ շարժումություն և
մշտապես պատրաստ են մարտի հա-
մար վոչ հնարավորություն և տալիս
հանկարծակի հարձակվել հակառու-
կորդի վրա և վոչնչացնել նրան :

գ) Ունեն մեծ ծանրություն և
շարժման արագություն, վոչ հնարա-
վորություն և տալիս տանկերին
շարժվելիս ավերել գնդացրային բը-
ները, շքոցները և հակառակորդի
մյուս արգելքները ու քարուքանդ ա-
նել լարտիակոցները :

ԹՈՒՅՆ ԿՈՂՄԵՐԸ

ա) Զրահուժերը ուժեղ են միայն
այն ժամանակ, յերբ գործում են հե-
տեվակի կամ հեծելազորի հետ միա-
սին, վոչովհետեվ նրանք (զրահու-
ժերը) կարող են գրավել տեղանքը և

չկարողանալ յերկաթ ժամանակ այլ
դրաված տեղը իրենց ձեռքում պահել :

բ) Տանկերն ու գրահամեքենաները
կտրվելու կամ ուրիշ անսարքության
պատճառով թաղվում մնում են մի
տեղում . նրանք չեն կարող անցնել
հինգ մետր լայնությամբ և յերկու
մետր խորությամբ գետեր և խրամ-
ներ (խանդակներ) . չեն կարող անց-
նել ճահիճներից և առհասարակ ճահ-
ճուտներից . չեն կարող անցնել խիտ
անտառներով, կտրտած բայց հաս-
կոճղերը դեռ չիտած անտառի միջով,
խիտ կտրված, դարավուլ ափերով
ձորակներ և բլրակներ, բարձր ու
հաստ քարե ու բետոնե պատեր և
այլն :

Զրահագնացքները ամբողջությամբ
կախված են յերկաթուղագծից և յեթե
դիժը քանդվում է, նրանք այլևս ա-
ռաջ չարժիկ չեն կարող :

**ԻՆՉՊԵՍ ԵՆ ԳՈՐԾՈՐԿ ՅԱՆ-
ԿԵՐԸ, ԶՐԱՎԱՄԵՖՆԵՆԱՆԵՐԸ
ՅԵՎ ԶՐԱՎԱԳՆԱՑՖՆԵՐԸ
ՄԱՐՏՈՒՄ**

Տանկերը մարտահան գործողու-
թյուններին ռայոն են տեղափոխվում
յերկաթուղով, և միայն բեռնաթափ-
ման տեղից մինչև համաքատեղը, յեր-
կաթուղուց վոչ ավելի քան 20 կիրո-
մետր հեռու, նրանք շարժվում են ի-
րենց ընթացքով (խող) : Այն սրազըն-
թաց տանկերը, վորոնք իրենց ընթաց-
քով (խողով) անցքում են մինչև 100
կիրոմետր, նույնպես տեղափոխվում
են յերկաթուղով, վորքան հնարավոր
է, ճակատին մոտիկ, վորովհետեւ
յերկարատեւ ինքնընթացով շարժվե-
լիս ընթացային մեխանիզմները շու-
տով մաշվում են :

Նախքան մարտը տանկերը մոտեց-
նում են յեղման դիրքին, մոտավորա-
պես այն բնադժին, վորտեղից հետե-
վակը պետք է հարձակում սկսի :

1-296399

Վարպետի հակառակորդը Հայտա-
բերի տանկերին, մինչև նրանց մար-
տադաշատում դորձադրելը, լավ ջո-
ղարկում են նրանց դեռ համաքատե-
ղում և յեղման դիրքերում, իսկ հա-
կառակորդին մոտիկ բոլոր շարժում-
ները նրանք կատարում են գիշերը :

Տանկերի գրոհի սկիզբը միշտ հա-
մաձայնեցնում են հետեվակի հետ,
վորը հարձակում է գործում տանկերի
պաշտպանության տակ :

Տանկերը գրոհի յեն գնում հետեվա-
կի առաջից, վորպեսզի հետեվակի հա-
մար ճանապարհը մաքրեն լարսիա-
կոցներից, նույնպես և իրենց վրա գը-
րավեն պաշտպանվող հակառակորդի
հետեվակի ու հրետանու կրակը, վոր-
պեսզի աշղպիսով հնարավորություն
տան իրենց հետեվակին հարձակում
դորձել քիչ կորուստներով :

Մարտի համար տանկերը լայնազատ-
վում են մարտակալից, շարժվելով
հակառակորդի վրա մեկվեւմ մի քա-
նի դժերով (ալիքներով) 100-150 մետր
միջանցներով տանկերի վրա :

Տանկերի գրոհի գնացած ժամանակ հանած աղմուկը խլացնում, բողբոջում են թռչող սավառնակներով և հր-բխտանական հրաձգությամբ:

Հակառակորդին կուրացնելու և տանկերի գրոհը նրա համար անսպասելի դարձնելու համար գործադրում են ծխածածկույթներ, վորոնց միջով տանկերը անսպասելիորեն գրոհում են հակառակորդի վրա, ժամանակ չտալով նրան գրոհը յետ մղելու համար պատրաստություն տեսնել:

Տանկերի հետ հարձակում գործող հետեվակը տանկերից 200-250 մետրից ավելի հեռու չալետի գտնվել, վորպեսզի հարկավոր բոլորչին խսկույն բռնի տանկերի գրախած տեղանքը:

Մակայն հրաձիգներին խորհուրդ չի տրվում նույնպես տանկերի հետ մտախի տարածության վրա շարժվել (տանկից 5-10 քայլ) կամ նույն տանկերի վրա, վորովհետեւ առաջին դեպքում նրանք հակառակորդի կրակի տակ կընկնեն և շարքից դուրս կը-

դան, իսկ յերկրորդ դեպքում, նրանք կարող են տանկի տակն ընկնել և տրորվել:

Տանկերի յետևից գնացող հետեվակը գնդացրային և հրացանային կրակ է վարում տանկերի միջև միջմանցե-րով և նրանց գլխավերեվով, առանց վախենալու թե կհարվածեն իրենց տանկերի սղասարկուռներին. նրանք պաշտպանված են այնպիսի պողպատ-յա գրահով, վոր չի կարելի ծակել հրացանա-գնդացրային գնդակով:

Մարտում հետեվակն ու տանկերը պետք է փոխադարձաբար ոչնեն իրար, հիշելով, վար փոխադարձաբար ոգնուրթյամբ և իրար նեղ տեղից ազատելով միայն կարելի յե ձեռք բերել հուշագություն, հաղթանակ:

Ջրահամեմանները նույնպես գործում են խմբակներով (դասակներով՝ բողկացած 3-4 մեքենաներից): Մարտում նրանք շարժվում են մեկ մեկու յետեվից վորոչ հեռավորության վրա (100-200 մետր), ցույց տալով փո-

խաղարձարար կրահային ոգնություն
և ամբողջ ժամանակ մանյովբելով,
այսինքն՝ առաջ շարժվելով մի տեղից
մի ուրիշ տեղ:

Մարտում տանկերն ու զրահամեքե-
նաները կրակ են վարում շարժվելիս,
սակայն այն դեպքում, յերբ պահանջ-
վում է փոքր նշան հարվածել, նրանք
կարող են կանգ առնել և թնդանոթի
մի քանի ձիգերով վոչնչացնել այլ
նշանը:

Ձրահագնացիկները հարձակման ժա-
մանակ արագորեն առաջ են աճցնում,
ընկնում են հակառակորդի վրա և վո-
չնչացնում նրան իրենց հրետանական
և գնդացրային կրակով: Ձրահագնաց-
քի հետ գործող հետեվակը կամ հեծե-
լազորը անմիջապես իրենց ուժերով
ամբացնում են ամեն մի ձեռք բերած
հաջողություն:

Պաշտպանության ժամանակ զրահա-
գնացքները ոգնում են պաշտպանվող
գործերին յետ մղելով հակառակորդի

գրոհները իրենց կրակով և մանյովբե-
ներով:

Յեթե յերկաթուղապիծը քանդվում
է զրահագնացքը հնարավորություն
չի ունենում մոտենալ հակառակորդին
ուղիղ ձիգի հեռավորության վրա,
այն ժամանակ, նա հակառակորդին
գնդակոծում է փակ դիրքերից, վոր-
պես հրետանական մարտից:

ՏԱՆԿԵՐԻ ՅԵՎ ՁՐԱՀԱՄԵԳԵ- ՆԱՆԵՐԻ ԳԵՄ ԿՈՎԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ:

Շատ միջոցներ կան տանկերի և
զրահամեքենաների դեմ կովելու հա-
մար (հրետանին, ավիացիան, ճար-
տարապիտական տեխնիկական միջոց-
ներ և այլն)․ սակայն նրանք յերբեմն
կարող են չլինել: Դրա համար յուրա-
քանչյուր մարտիկ պետք է պատրաստ
լինի հանդիպելու զրահուժերին և կա-
րողանա կովել նրանց դեմ: Մեծ մա-
սամբ մարտիկը զրահուժերի դեմ կըռ-
վի յե դուրս գալիս իր ստորաբաժան-

ման կառքեւմ , իր հրամասարի գեկա-
վարութեամբ . սակայն ամեն մի ան-
հատ մարտիկ պետք է ընդունակ լինի
կռվելու նրանց դեմ եւ՛ իր սեփական
նախաձեռնութեամբ : Այդ պատճա-
ռով հարկավոր է հասկանալ , յուրաց-
նել եւ միշտ կատարել հետեւյալ կա-
տանները .

1) Լինել արթուն , զգոն , ուշադիր ,
յերբ կանգնած եւ պոստում տանկերին
կամ զրահամեքենային դիտելու . հա-
մար , վորպեսզի թո՛ւ ընկերները ժա-
մանակին կարողանան պատրաստվել
նրա դեմ կռվի դուրս գալու եւ վոր-
պեսզի ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ
նախապզուշական միջոցները :

2) Յերբոր հայտնվում են տանկե-
րը (կամ զրահամեքենաները) յերբեք
դուռից մի կորցնի , խուճապի մի մատ-
նովիբ , այլ ստանաարտութեամբ կը-
տողատիր պարազան , պայմանները :
Հիշիր , վոր վարուստի ամեն մի փորձ
քեզ եւ , թո՛ւ ընկերներին եւ կորուստի
կմատնի : Հանդիստ կերպով սպասիր

ջոկի հրամասարի ցուցումներին , իսկ
յեթե նա չկա , գործիր ինքդ թո սեփա-
կան նախաձեռնութեամբ :

3) Տանկի (կամ զրահամեքենայի)
մասնադու ղեպում դես ու դեն մի՛
ընկնիր , մի՛ շփոթվիր , մի՛ մատնիր թե
տանկը անպատճառ թո վրա յե սողում ,
ինչպես այդ թվում է հեռվից : Գտիր մի
ծածկված տեղ եւ սողալով դնա ղեպի
այդ ծածկված տեղը կամ գործիր այն-
պես , ինչպես ցույց կտա ջոկի հրամա-
սարը :

4) Մի մոռանա , վոր նույնիսկ տան-
կին մոտիկ (կամ զրահամեքենային
մոտիկ) կարելի չէ մնալ աննկատե-
լի կերպով : Տանկը թող ա-
ռաջ անցնի , իսկ դու հակահարված
հասցրու տանկի յետեւից յեկող հա-
կառակարդի հետեւակին : Յեթե հե-
տեւակին հաջողի յետ շարտել , այն
ժամանակ տանկերը յետ կվերադառ-
նան , վորովհետեւ նրանք չեն կարող
հաջողութեամբ գործել ստանց հետե-
վակի ողնութեան :

5) Հետեվիւր ջոկի հրամայտարիւզ և ընկերներիւզ զործողություններին, և միչտ պատրաստ կաց անհրաժեշտության դեպքում ոչնչու նրանց:

6) Յեթե անխուսափելիորեն պետք է հանդիպել տանկին (կամ զրահամեքենային), հիշիւր, վոր հրացանով դիպուկ կրակը դիտանցքի վրա կամ մի կապոց նոնակների հաջող նետումը տանկի կամ զրահամեքենայի վրա կարող է մեզ համար նրան անվնաս դարձնել:

7) Գնդացրով կամ հրացանով տանկի և զրահամեքենայի վրա հրաձգություն կատարելիս աշխատիւր կպցնել նրանց վրա յեղած անցքերին. այդ անցքերի (ծակերի) միջով տանկի կամ զրահամեքենայի խումբը (սպասարկուները) գիտողությունն և կապարում և այդ անցքերի միջով դուրս են հանված թուղանութներն ու դնդացրերը:

8) Յեթե տանկին կամ զրահամեքենային հանդիպում ես բնականաբար, աշխատիւր թաղնվել շենքերի յետեվը, վորքան կարելի յե մտտեցիւր նրան

և նետիւր նրա տակ մի կապոց նոնակներ(ամենաքիչը հինգ հատ մխափն կապած): Յեթե նոնակներ չունես, այն ժամանակ աշխատիւր փակել նրա գլուղից դուրս գալու և մտնելու ճանապարհը դեբաններով կամ զանազան սուարկաներով:

Յերրոր տանկը կամ զրահամեքենան կանդ կառնի, և խումբը դուրս կգա արգելքները ճանապարհից մաքրելու, իսկույն հարվածիւր նրան հրացանով. հիշիւր, վոր առանց լամբի (առանց սպասարկուների) տանկը և զրահամեքենան մարտունակ չեն:

9) Տանկերին և զրահամեքենաներին յերթում հանկարծակի պատահելու ժամանակ, աշխատիւր թաղնվել ծառերի, ջարերի, բլրակների կամ թիւրի յետեվը, և այնտեղից կրակիւր դեպի քեզ յեկող տանկի կամ զրահամեքենայի վրա, նշան բռնելով դիտանցքներին, իսկ յեթե ունես նոնակներ, այն ժամանակ նետիւր ուղղակի տանկի տակը կամ թրթուրի տակ:

10) Յեթե տանկերը հանկարծ վրա
յեն տուլիս քեզ խրամատներում և դու-
ժամանակ չունես թաղնվելու, այն
ժամանակ, հենց վոր տանկը կսկսի
խրամատն անցնել, նետիր նրա տակ
նռնակներ և կրակիր նրա անցքերի
վրա, վորոնք քեզ տեսանելի յեն:

ԶՐԱՀԱԳՆԱՑՔՆԵՐԻ ՅԵՎ ԶՐԱՀԱԳՐԵԶԻՆԱՆԵՐԻ ԳԵՄ ԿՈՎԵՆՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1) Զրահազնայքների և դրահազը-
րեղիմանների դեմ կռվելու ժամանակ
ամեն մի մարտիկ չպետք է մոռանա,
վոր այլ դրահուժերը սարսափելի
յեն միայն այն ժամանակ, յերբ նրանց
համար ճանապարհը սարքին է. դրա
համար էլ նրանց դեմ կռվելու ամենա-
լավ միջոցն է՝ փչացնել յերկաթուղա-
դիժը, կամ ուղիները և ուղեկամուրջ-
ները (վխդուկները):

*) Զրահազրեղիման նույն դրահամարերին
է. միայն դրված յերկաթուղային անիվների
վրա, յերկաթուղագծի վրա դործելու համար:

2) Յեթե ճանապարհը քանդելու
համար վաչ դործիքներ կան և վաչ
ժամանակ, պետք է յերկաթուղագծի
վրա թափել ձեռքի տակ յեղած առար-
կաները՝ շպախներ, սելյուեր, գերան-
ներ, մեծ-մեծ քարեր, աղյուաններ և
այլ ծանր առարկաներ. այդպիսով
կանգնեցնել ղնացքը, և հենց վոր այդ
արգելքները վերացնելու համար զրա-
հազնայքից դուրս կզան սպասարկու-
ները, հարվածել նրանց հրացանների
և ղնդացրերի կրակով, թաղնվելով
մոտիկ յեղած թաղստոցներում:

3) Յերկաթուղագծին մոտիկ ամեն
չարժումների ժամանակ մի մոռանա,
վոր հակառակորդի դրահազնայքը
կարող է վրա տալ հանկարծակի:

Հակառակորդի դրահազնայքը հայ-
տարեքելիս իսկույն հայտնիդ այդ մա-
սին քո հրամատարին և գործիր նրա
ցուցումներով:

4) Յեթե դրահազնայքը հանկար-
ծակի քո և քո ընկերների վրա յե հար-
ձակվում և յեթե հրամատարը ցու-

ցումներ չի օվել, այն ժամանակ դոր-
ժիք ըստ սեփական նախաձեռնութեամբ,
աշխատիր զրահագնացքի յետևն անց-
նել և քանդել յերկաթուղու ճանա-
պարհը նրա թիկունքում կամ թափել
ճանապարհի վրա դանաղան ծանր ա-
ռարկաներ և գնդակոծել ծածկարա-
նից ղիտանցքները, հրահնարները
(ամբրազուրա) հրացանի և գնդացրի
կրակով:

5) Յեթե հանկարծակի զրահագնաց-
քը կայարանի վրա յե գալիս, յերբ
դու կայարանումն ես դանվում, աշ-
խատիր թագնվել մուտակա շինութուն-
ների յետովը, և կայարանի շինքերը
չըջանցելով աշխատիր դուրս գալ թի-
կունք և այնտեղ քանդել յերկաթու-
ղագիծը կամ դժի վրա թափթփել դա-
նազան ծանր առարկաներ. ամենից
լավն և յելքի սլաքները փչացնել, և
հենց զրահագնացքը կկանգնի, ամբողջ
կրակը կենարոնացրու զրահագնացքի
խմբի վրա, յերբ դուրս կդա գիծը նո-
րոգելու:

Հիշի՛ր, վոր հրացանների և գնդա-
ցրերի կրակով զրահագնացքը չի կա-
րելի վոչնչացնել. դրա համար ըստ խըն-
դիքը պետք ե լինի, — զրահագնացքի
նահանջի դիծը կարել, իսկ այնուհե-
տեվ իր թիկունքից կորված զրահա-
գնացքը հեշտութեամբ արելի յե վո-
չնչացնել հրետանու կրակով:



Յ Ա Ն Կ

Ձրահութիւն	3
Տանկեր	3
Ձրահալոր Ավստրալիներ	9
Ձրահագնացի	11
Ձրահաութիւնի ուժեղ և բույլ կողմերը	13
<i>Ուժեղ կողմերը</i>	13
<i>Թույլ կողմերը</i>	14
Ինչպէս են գործում տանկերը, չքանակ- նանքը և գրահագնացիները մարտում	16
Տանկերի և գրահամեքենաների դիմ կրու- վելու կանոնները	21
Ձրահագնացիների և գրահադրեպիւսների դիմ կռիւի կանոնները	26

ՀՀ Ազգային գրադարան



NL0957134

ԳԻՆԸ Ե Ա.

I
2955